Հայտարարություն ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի կապակցությամբ

Հուլիսի 13, 2005

2005 թվականի հուլիսի 7-ին ՀՀ իշխանությունները Սահմանադրության փոփոխությունների նախագիծն ուղարկել են Վենետիկի հանձնաժողովի քննարկմանը, իսկ օգոստոսի 29-ին հրավիրված է Ազգային ժողովի արտահերթ նիստ՝ նախագիծը քննարկելու օրակարգով:

Սահմանադրության փոփոխությունների նախագծում ներմուծված է դրույթ, ըստ որի էլեկտրոնային լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող *մարմնի* (այստեղ եւ այսուհետեւ՝ ընդգծումները մերն են) անդամներին ՀՀ նախագահի ներկայացմամբ նշանակում է ՀՀ Ազգային ժողովը: Ըստ նախագծի հեղինակների, այն համապատասխանում է 2005 թ. հունիսի 23-24-ին Ստրասբուրգում ընդունված «Համաձայնեցված գործողություններ «Ժողովրդավարություն օրենքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) եւ Հայաստանի իշխանությունների միջեւ՝ սահմանադրական բարեփոխումների գործընթացի վերաբերյալ» փաստաթղթին, որի կետերից մեկը ենթադրում է խորհրդարանի ներգրավումը լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող *մարմինների* անդամների նշանակման գործընթացում:

Մենք պնդում ենք, որ Վենետիկի հանձնաժողովի գնահատմանն ուղարկված նախագծի համապատասխան ձեւակերպումը լրատվամիջոցների ազատության, անկախության եւ բազմակարծության խնդրի լավագույն լուծումը չի տալիս եւ ամբողջությամբ չի արտահայտում «Համաձայնեցված եզրակացությունների» սկզբունքները:

Նախ՝ փոփոխությունների նախագիծը նշում է կարգավորող *մեկ*՝ ըստ հեղինակների պարզաբանումների՝ մասնավոր հեռարձակողների գործունեությունը կարգավորող *մարմնի* մասին, այն դեպքում, երբ ըստ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի՝ նախատեսված են երկու կարգավորող մարմիններ՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ու Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը: Հետեւաբար՝ դրույթը պետք է վերաբերեր ոչ թե մեկ մարմնի, այլ՝ *մարմինների*, մանավանդ, որ «Համաձայնեցված եզրակացություններում» այդպես էլ նշված է՝ «լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող *մարմինների*…»: «Հեռարձակումը կարգավորող *մարմիններ*» արտահայտությունն է օգտագործված նաեւ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 1458 (2005)՝ «Սահմանադրական բարեփոխումների գործընթացը Հայաստանում» բանաձեւում:

Այնուհետեւ՝ ավելի տրամաբանական եւ նպատակահարմար կլինի, եթե Ազգային ժողովը՝ որպես իր բնույթով ներկայացուցչական եւ հասարակության տարբեր շերտերի շահերն արտահայտող հաստատություն, ներկայացնի կարգավորող մարմինների անդամների թեկնածությունները, իսկ Նախագահը, որպես Սահմանադրության երաշխավոր եւ պետության գլուխ, նշանակի նրանց: Դրանով կապահովվի իշխանության տարբեր թեւերի եւ

հասարակության ակտիվ մասնակցությունն այդ մարմինների ձեւավորմանը: Հետագայում՝ Սահմանադրության փոփոխությունների ընդունումից հետո, «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքում կատարվելիք փոփոխություններով կսահմանվի ԱԺ կողմից այդ մարմինների անդամների առաջադրման եւ Նախագահի կողմից հաստատման կամ մերժման կարգը:

Մենք կարծում ենք նաեւ, որ Սահմանադրության մեջ պետք է ներառել գրաքննության ցանկացած ձեւն արգելող դրույթ: Մեր այս առաջարկը բխում է այն իրողությունից, որ ժողովրդավարության ուղին բռնած երկրներում, որոնցում ոչ հեռու անցյալում կային գրաքննություն իրականացնող մարմիններ, պահպանվում է թաքնված գրաքննության տարրեր ներդնելու վտանգը: Սահմանադրության մեջ գրաքննության ցանկացած ձեւն արգելող դրույթը տարբեր օրենքներում դրա քողարկված դրսեւորումները բացառելու երաշխիք կլինի:

Մենք կոչ ենք ՀՀ Ազգային ժողովին՝ մեր առաջարկած դրույթները ներառել երկրորդ ընթերցման ներկայացվող նախագծում:

Երեւանի մամուլի ակումբ
Հայաստանի ժուռնալիստների միություն
Հայաստանի «Ինտերնյուս» ՀԿ
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե
«Հետաքննող լրագրողներ» ՀԿ
«ԹԻՄ» ուսումնասիրությունների կենտրոն
Գյումրիի ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ